31.08.2022թ

Լոռու մարզի

« Ծաթերի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

# Տնօրեն՝ԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

# ՊԼԱՆ

**2022-2023 ուսումնական տարի**

# Պարտադիր կրթության իրականացում

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Իրականացնող անձիք | Ծանոթու-թյուն |
|---|---|---|---|---|
| 1. | Անցկացնել 4,5,6 տարեկան երեխաների հաշվառում դպրոցի սպասարկման տարածքում: | Հուլիս, օգոստոս | տնօրեն բուժքույր, դասվար | |
| 2. | Կոմպլեկտավորել դասարանները, երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: | սեպտեմբեր | տնօրեն դասղեկ, դասվար | |
| 3. | Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով: | տարվա ընթացքում | տնօրեն դասղեկ, դասվար, ուսուցիչներ | |
| 4. | Ուշադրության կենտրոնում պահել, ետ մնացող աշակերտներին | ուստարավա ընթացքում | տնօրեն դասղեկ,մ/մ դասվար,ուս.օգնական | |
| 5. | Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհրդին: | ուստարավա ընթացքում | տնօրեն դասղեկ, դասվար | |
| 6 | Կատարել այցեր աշակերտների տուն : | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | Մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը լրացնել ԱՈՒՊ- ները՝ սահմանված կարգով: | ուստարվա ընթացքում | տնօրեն պարապող ուսուցիչներ, ուսուցչի օգնական | |
| 8 | Ամիսը մեկ անգամ գումարել մեթոդմիավորման նիստեր, արձանագրել | ուստարվա ընթացքում | մ/, նախագահներ, | |
| 9 | Էլեկտրոնային մատյանի ստուգում յուրաքանչյուր ուրբաթ | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |
| 10 | Առարկայական մեթոդական միավորումների նախագահների օգնությամբ ստուգել ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման վիճակը | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |
| 11 | Վերահսկել դասղեկների դաստիարակչական աշխատանքային պլաններով նախատեսված աշխատանքների կատարումը: | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |
| 12 | Վերահսկել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը: | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |
| | | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |
| 13 | Իրականացնել պարբերական վերահսկումներ՝դասղեկների կողմից աշակերտական ինքնավարության խնդիրներին ուղղված գործընթացների նկատմամբ: | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |

## Աշխատանք ծնողների հետ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Իրականացնող անձիք | Ծանոթ ություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հրավիրել դպրոցի ընդհանուր ծնողական ժողովներ | ուստարվա ընթացքում առնվազն 2 անգամ | տնօրեն | |
| 2. | Պլանավորել 2022-2023 ուսումնական տարվա ծնողական խորհրդի գործունեությունը: | | տնօրեն | |

# Աշխատանք մանկավարժական անձնակազմի հետ, որակավորման բարձրացում

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Իրականացնող անձիք | Ծանոթութ-յուն |
|---|---|---|---|---|
| 1. | Նշանակել մասնախմբի նախագահներ, դասղեկներ | օգոստոս | տնօրեն | |
| 2. | Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբերի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ դպրոցում ուսումնադաստիարակչական ախատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Յանձնարարել՝ ա. առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: | օգոստոս | տնօրեն, մասնախմբի ղեկավարներ | |
| 3. | Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն, լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: | ամիսը մեկ անգամ | տնօրեն, մասնախմբի ղեկավարներ | |
| 4. | Կատարել դասալսումներ՝ ըստ անհրաժեշտության<br>• Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություն,առաջարկություններ և հանձնարարություններ:<br>•<br>Իրականացնել սեմինարներ ուսուցիչների | ուստարվա ընթացքում<br>ուստարվա ընթացքում<br>երկրորդ | տնօրեն, մ/մ, դասղեկ, դասվար, ուսուցիչներ<br>բոլորը<br>տնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հետ «Ակտիվ ուսումնառության մեթոդներ», թեմաներով: | կիսամյակ | | |
| 5. | Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության և գիտության նախարարության հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին: | Տարվա ընթացքում | տնօրեն | |
| | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումների: | տարվա ընթացքում | տնօրեն, մասնախմբի ղեկավարներ | |
| 6. | Ժամանակին կազմակերպել և հաստատել քննական հանձնաժողովները փակցնել քննական կարգացուցակը` քննությունները սկսելուց առնվազն 10 օր առաջ: | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |
| 7. | Ներկայացնել պարտադիր վերապատրաստման | ուստարվա ընթացքում | տօրեն, դասղեկ, դասվար, ուսւցիչներ | |
| 8. | Մասնակցել կամավոր վերապատրաստման | տարվա ընթացքում | տնօրեն | |
| | | տարվա ընթացքում | ուսուցիչներ, տնօրեն | |
| 9. | Պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները: | ուստարվա ընթացքում | Տնօրեն, խորհրդակցական մարմիններ | |
| 10. | Սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ ու վարվելակերպ, նպաստել նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանը, դաստիարակել մարդասիրություն և հայրենասիրություն | ուստարվա ընթացքում | Տնօրեն, դասավանդող ուսուցիչներ, դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները: | ուստարվա ընթացքում | Տնօրեն, դասավանդող ուսուցիչներ, դասղեկներ, | |
| | Զարգացնել նաև թույլ առաջադիմություն ցուցաբերող աշակերտների և թվով 2 ԿԱՊԿՈՒ սովորողների ինքնուրույնությունը՝ համագործակցելով տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ | ուստարվա ընթացքում | Տնօրեն, դասավանդող ուսուցիչներ, դասղեկներ, ուս.օգնական | |

## Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Իրականացնող անձիք | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Առաջին զանգի արարողություն | սեպտեմբեր | Դասվարներ | |
| 2. | Մանկավարժական խորհրդի կազմի քարտուղարի ընտրություն | օգոստոս | տնօրեն | |
| 3. | Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի հաստատում | օգոստոս | տնօրեն | |
| 4. | ԱՈՒՊ ների հաստատում | սեպտեմբեր | տօրեն, ուսուցչի օգնական | |
| 5. | Սովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել: | տարվա ընթացքում | բոլորը | |
| 6. | Կատարել առարկայական ուսունմասիրությունների արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում, տնօրինության խորհրդակցություններում, | ուստարվա ընթացքում | տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 2.Օտար լեզուներ<br>3. Բնագիտական առարկաներ<br>4. Տարրական կրթության<br>5. Ընդհանուր զարգացման<br>6. Մաթեմատիկա<br>7. Պատմություն | | | |
| 15 | Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցուցաբերել մանկավարժներին՝ ուշադրություն դարձնելով ուսուցիչ-աշակերտ հարաբերությանը, ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսին | ուստարվա ընթացքում | Տնօրեն,դասղեկնր | |
| 16 | Սովորողների ճանաչողական հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով կազմակերպել արշավներ պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր:<br>Կազմակերպել միջոցառումներ՝ նվիրված Տոնական և հիշատակի օրերին.<br>•Ամանոր, Սուրբ Ծնունդ և Հայտնություն<br>•Բանակի օր<br>•Կանանց տոն<br>•Ցեղասպանության զոհերի հիշատակի օր<br>•Հանրապետության տոն<br>•Անկախության տոն<br>•Ուսուցչի օր<br>•Խաչվերաց տոն<br>•Թարգմանչաց տոն<br>•Վարդանանց տոն<br>•Տյառնընդառաջին նվիրված տոն<br>•Սուրբ Զատկին նվիրված տոն<br>•Համբարձման տոն | ուստարվա ընթացքում | Տնօրեն,դասղեկնր | |
| 17 | Կազմակերպել առարկայական շաբաթներ: | | գրադարանավար, դասղեկներ | |
| 18 | Ժամանակին կազմակերպել և հաստատել քննական հանձնաժողովները փակցնել քննական կարգացուցակը՝ քննությունները սկսելուց առնվազն 10 օր առաջ: | Մայիս | տնօրեն, մ/մ նախագահներ | |
| 19 | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննությունների նախապատրաստելու համար: | մայիս | տնօրեն, մ/մ նախագահներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | Վերջին զանգ | | դասղեկ | |

## Ներդպրոցական վերահսկողության համակարգ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Իրականացնող անձիք | Ծանոթութ-յուն |
|---|---|---|---|---|
| 1. | Յուրաքանչյուր ամսվա վերջում գումարել տնօրինության նիստ, վերլուծել ամսվա պլանները.<br>ա/ Լսել տնօրինության անդամների հաղորդումը շաբաթական պլանների կատարողականի մասին: Բացահայտել աշխատանքում տեղ գտած թերությունները:<br>բ/ Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, դասղեկ, դասվար, ուսուցիչներ | |
| 2. | Ուստարվա սկզբից կատարել աշխատանքի բաժանում որոշակի դարձնելով յուրաքանչյուրի աշխատանքի շրջանակները: | օգոստոսի վերջ | տնօրեն | |
| 3. | Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները: Ներկայացնել ներքին գնահատման հաշվետվությունը | սեպտեմբերի սկիզբ | տնօրեն, | |
| 4. | Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստում քննարկել սովորողների հաճախումների և առաջընթացի հարցը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, դասղեկ, դասվար | |
| 5. | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստում: | ուստարվա ընթացքում | տօրեն, դասղեկ, դասվար, ուսուցիչներ | |
| 6 | Համակարգել խորհրդակցական մարմինների աշխատանքը | ուստարվա ընթացքում | տնօրեն | |

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Իրականացնող անձիք | Ծանոթո ւթ-յուն |
|---|---|---|---|---|
| 1. | Կազմել տարեֆիկացիա: | սեպտեմբեր | տնօրեն | |
| 2. | Կազմել 2022թ. ֆինանսական տարվա ծախսերի նախահաշիվը | ուստարվա ընթացքում | տնօրեն, հաշվապահ | |
| 3. | Բյուջեի նախագծի քննարկում | հոկտեմբեր-դեկտեմբեր | տնօրեն, հաշվապահ | |

## Կազմակերպական-մանկավարժական աշխատանք

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Իրականացնող անձիք | Ծանո թու թյուն |
|---|---|---|---|---|
| 1. | Կատարել աշխատանքի բաժանում դպրոցի ադմինիստրացիայի միջեւ: | օգոստոս | Տնօրեն, | |
| 2. | Կատարել դասաբաշխում: | օգոստոս | տնօրեն | |
| 3. | Կոմպլեկտավորել դասարանները և նշանակել դասղեկներ: | սեպտեմբեր | տնօրեն | |
| 4. | Կազմել դասացուցակ:<br>Հաստատել թեմատիկ պլանները: | սեպտեմբեր | տնօրեն | |
| 5. | Ուսումնասիրել աշակերտների շարժը և կազմել հաշվետվություն | սեպտեմբեր | տնօրեն | |
| 6. | Մեթոդ մասնախմբի պլանների քննարկում և հաստատում | սեպտեմբեր | տնօրեն | |
| 7. | Առարկայական թեմատիկ պլանների | սեպտեմբեր | տնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | քննարկում և հաստատում: | | | |
| 8. | Ծանոթացնել մասնախմբի անդամներին տարակարգի բնութագրիչներին և դրանց շնորհման չափանիշներին՝ մղելով նրանց տարակարգստանալուն: | սեպտեմբեր | տնօրեն | |
| 9. | Հրավիրել դասղեկների խորհրդակցություն, պլանավորում՝ նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը: | սեպտեմբեր | տնօրեն | |
| 10. | Հրավիրել ծնողկոմիտեների խորհրդակցություն | առնվազն տարին երկու անգամ | տնօրեն | |
| 11. | Հրավիրել մանկավարժական խորհրդի նիստ: | առնվազն երկու ամիսը մեկ սեպտեմբեր | տնօրեն | |
| 12. | Ստեղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ վերը նշված կառույցներում աշխատանքները կազմակերպելու համար: | մշտապես | տնօրեն | |
| 13. | [illegible] | | | |

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Իրականացնող անձիք | Ծանոթ ություն |
|---|---|---|---|---|
| 1. | Ներառական կրթությունը որպես նպատակ ամրագրել հաստատությունում գործող բոլոր օղակներում: | Տարվա ընթացքում | Տնօրեն | |
| 2. | Ուշադրություն դարձնել ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներին , այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներին: | Տարվա ընթացքում | Տնօրեն | |
| 3. | Իրականացնել երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողակա-նությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր: | Տարվա ընթացքում | Տնօրեն | |
| 4. | Վերահսկողություն իրականացնել ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանամանկա-վարժական թիմի աշխատանքներին: | Տարվա ընթացքում | Տնօրեն | |
| 5. | Սահմանված ժամկետներում կազմել և լրացնել ԱՈՒՊները | Տարվա ընթացքում | Տնօրեն պարապող ուսուցիչներ, ուսուցչի օգնական | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ<br>Խորհուրդ: | ուււստարվա ընթացքում առնվազն4 անգամ | դասղեկներ | |
| 4. | Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և զեկուցումերի թեմատիկ պլան: | ուստարվա ընթացքում | տնօրեն, դասղեկներ, մ/մ | |
| 5. | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում: | ուստարվա ընթացքում | տնօրեն, դասղեկներ | |
| 6. | Կազմակերպել բաց դռների օր | ուստարվա ընթացքում | տնօրեն, , | |
| 7 | Հանդիպում քննարկումներ | ուստարվա ընթացքում | դասղեկներ, ուսուցիչներ, | |
| | | ուստարվա ընթացքում | | |

## Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնական բազայի ամրապնդում

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մանկավարժական խորհրդում: | | | |
| 7. | Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ: | դեկտեմբեր - հունվար | տնօրեն, մ/մ , ուսուցիչ | |
| 8. | Բացահայտել աշակերտների և ուսուցիչների ներուժը՝ կազմակերպել տաղանդների երեկո | ուստարվա ընթացքում | Ա.Ավետյան | |
| 9 | Խրախուսել աշակերտների և ուսուցիչների մասնակցությունը տարբեր դպրոցական և արտադպրոցական միջոցառումներին | | տնօրեն,ուսուցիչներդ աստղեկներ | |
| 10 | Ապահովել աշակերտների մասնակցությունը «Կենգուրու», «Արջուկ», «Մեղու» մրցույթներին | փետրվար-մարտ | դասվարներ, ուսուցիչներ | |
| 11 | Կազմակերպել միջոցառումներ, բաց դասեր, գրքի քննարկումներ, կինոդիտումներ՝ ըստ հիշարժան օրերի և համապատասխան թեմատիկայի | ուստարվա ընթացքում | բոլորը | |
| 12 | Անցկացնել <<Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում>> միջոցառումը | մարտ | Չինղեկ | |
| 13 | Կազմակերպել սպորտլանդիաներ | տարվա ընթացքում | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ | |
| 14 | Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորել խորհրդակցական մարմիններ՝մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, մեթոդական միավորումներ.<br>1.Հ-լեզու և գրականություն | ուստարվա ընթացքում | բոլորը | |